ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/1385/02/24 ք. Երևան
15 Մարտի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Թաթուլ Ղուկասյանի, ծանոթանալով «ԲԻԼԴԻՆԳ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊ ընկերության ընդդեմ «ՀՀ վիճակագրական կոմիտե» ՝ Անվավեր ճանաչել (վերացնել) ՀՀ վիճակագրական կոմիտեի գլխավոր քարտուղարի 15.02.2024թ.-ին «ԲԻԼԴԻՆԳ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված թիվ 63-Ա հրամանը: պահանջի մասին հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑԻ

«ԲԻԼԴԻՆԳ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊ ընկերությունը 28.02.2024թ. էլեկտրոնային եղանակով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի գլխավոր քարտուղարի 15.02.2024 թվականի «ԲԻԼԴԻՆԳ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված թիվ 63-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի (Նախագահող դատավոր Ա. Թումասյան) 05.03.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցվորը 05.03.2024 թվականին կրկին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան:

Դատարանի (Նախագահող դատավոր Ա. Թումասյան) 12.03.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցվորը 12.03.2024 թվականին կրկին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան:
Հայցադիմումը դատավոր Թ. Ղուկասյանին է մակագրվել 12.03.2024 թվականին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:
2. Գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով»:
Տվյալ դեպքում ներկայացված հայցապահանջով հայցվորը վիճարկում է պատվիրատու պատասխանողի գործողությունները՝ ուղղված թիվ «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգով ՀՀ վիճակագրական կոմիտեի գլխավոր քարտուղարի 15.02.2024 թվականի «ԲԻԼԴԻՆԳ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված թիվ 63-Ա հրամանն, ուստիև հայցը ենթակա է քննության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխի կանոններով:
Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով, ինչպես նաև 27.2-րդ գլխի կանոններով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «ԲԻԼԴԻՆԳ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի գլխավոր քարտուղարի 15.02.2024 թվականի «ԲԻԼԴԻՆԳ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված թիվ 63-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. Գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով՝ դատական ակտի հրապարակման օր սահմանելով 26 ապրիլի 2024 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական էլեկտրոնային կայքի (datalex.am) միջոցով:

Որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել գործին մասնակցող անձանց:
Որոշումն անհապաղ ուղարկել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ secretariat@minfin.am:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Դատավոր՝ Digitally signed by GHUKASYAN TATUL 3907860608 Date: 2024.03.15 **Թաթուլ Ղուկասյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am